«ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ *

ՀՏԴ 341 *DOI: 10.52063/25792652-2025.2.25-28*

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան,
«ԱՎԵ ՅՈՒՍ» փաստաբանական գրասենյակի հիմնադիր,
Հայաստանում Ֆրանսիական համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
avetiq.hh@gmail.com
ORCID: 0000-0002-9834-0083

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայ-ռուսական համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mariamgrigoryan93@yandex.ru
ORCID: 0000-0002-0562-7473

«Պաշտպանելու պարտականություն» սկզբունքը (Responsibility to Protect, R2P) միջազգային իրավունքի կարևորագույն հիմնահարցերից է, որի նպատակն է կանխել մարդու իրավունքների զանգվածային խախտումները, ինչպես օրինակ՝ ցեղասպանությունը, պատերազմական հանցագործությունները, էթնիկ զտումները և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները: Սկզբունքն ընդունվել է միջազգային հանրության կողմից որպես միջոց՝ կանխելու հումանիտար աղետները և ապահովելու բռնության զոհերի պաշտպանությունը:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքի կիրառելիությունը Արցախի դեպքի շրջանակում՝ միջազգային իրավունքի և քաղաքական պրակտիկայի տեսանկյունից:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ Արցախում ստեղծված իրավիճակը դիտարկվում է ոչ միայն R2P-ի կիրառման իրավական հիմքերի, այլև այն քաղաքական գործոնների համատեքստում, որոնք այս դոկտրինի կիրառությունը դարձնում են խիստ ընտրողական:

Հոդվածը հիմնված է նորմատիվ ակտերի (ներառյալ ՄԱԿ-ի փաստաթղթերի), դոկտրինալ աղբյուրների, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցների վերլուծության, ինչպես նաև այլ դեպքերի համեմատական վերլուծության վրա, երբ հետազոտվող սկզբունքը կիրառվել է կամ չի կիրառվել (Լիբիա, Սիրիա, Ռուանդա և այլն):

* Հոդվածը ներկայացվել է 07.07.2025թ., գրախոսվել՝ 01.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

Այսպիսով՝ հոդվածում առաջադրվող հիմնական խնդիրն է ուսումնասիրել՝ արդյո՞ք միջազգային հանրությունն ուներ իրավական կառուցակարգեր՝ Արցախի պարագայում կիրառելու «Պաշտպանելու պարտականության» (Responsibility to Protect, R2P) սկզբունքը:

Հետազոտության իրականացման ընթացքում հեղինակների կողմից կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) սկզբունքներ:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ Արցախի դեպքը մատնանշում է «Պաշտպանելու պարտականության» (Responsibility to Protect, R2P) ընտրողական կիրառումը և քաղաքական կախվածությունը, ինչը հարցականի տակ է դնում դրա արդյունավետությունը՝ որպես համընդհանուր մեխանիզմ հումանիտար աղետները կանխելու գործում: Միաժամանակ, այն կարևոր փորձ է, որը կարող է ծառայել որպես հիմք այս սկզբունքի վերանայման և ապագայում ավելի ճկուն ու անկախ գործիքակազմերի մշակման համար:

Հիմնաբառեր՝ *Պաշտպանելու պարտականություն, Responsibility to Protect, Արցախ, միջազգային իրավունք, սկզբունք, մարդու իրավունքների խախտում, պատերազմ:*

Ներածություն

«Պաշտպանելու պարտականությունը» (Responsibility to Protect, R2P) միջազգային իրավունքի սկզբունք է, որի նպատակն է ապահովել, որ միջազգային հանրությունը թույլ չտա ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, էթնիկ զտումների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների զանգվածային դրսևորումներ: Այս գաղափարը ձևավորվել է որպես արձագանք՝ 1990-ականներին Ռուանդայում և նախկին Հարավսլավիայում տեղի ունեցած զանգվածային ոճրագործություններին, որոնց միջազգային հանրությունը բավարար կերպով չէր արձագանքել:

«Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքի զարգացումը և էությունը

«Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքը շատ առումներով զարգացումն է հումանիտար ինտերվենցիայի (միջամտության) գաղափարի, որը ներկայացվել էր 2001 թվականին Միջամտության և պետության ինքնիշխանության հարցերի միջազգային հանձնաժողովի կողմից (ICISS): Այս դոկտրինի հիմքում ընկած է այն համոզմունքը, որ պետությունները պետք է միմյանց աջակցեն և կիսեն պատասխանատվությունն իրենց բնակչության՝ ագրեսիայի հանցագործություններից և մարդու իրավունքների կոպիտ խախտումներից պաշտպանելու հարցում: Այս գաղափարը ձևավորվել էր 1990-ականներին՝ ինքնիշխանության նոր ըմբռնման հետ մեկտեղ, որը մեծապես ազդել է այդ դոկտրինի ձևավորման վրա: Ըստ նոր ձևավորված տեսության՝ միջազգային հանրությունը, որը նախկինում կազմված էր միայն ինքնիշխան պետություններից, այժմ ներառում էր նաև այլ սուբյեկտների: Քանի որ պետությունները փոխկապակցված էին միջազգային իրավունքին ենթարկվող միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ոչ պետական դերակատարների՝ հասարակական կազմակերպությունների, ահաբեկչական խմբավորումների, անհատների և բազմազգ կորպորացիաների հետ: Այսպիսով՝ միջազգային հարաբերությունները սկսեցին պայմանավորել ուժերի նոր հավասարակշռությամբ, որն ընդգրկում էր նաև ոչ պետական դերակատարներին:

Վերջինս էլ հանգեցրել էր նոր իրավական կառուցակարգերի անհրաժեշտության՝ նոր իրողությունները և մարտահրավերները կառավարելու նպատակով:

Այս ամենը կարելի է համեմատել «Կոպեռնիկյան հեղափոխության» հետ. միջազգային հանրությունը այլևս չէր հիմնվում բացառապես պետությունների սեփական շահերի, այլև՝ քաղաքացիական հասարակության ընդհանուր շահերի վրա: Անհատների դերի բարձրացումը հատկապես նկատելի էր միջազգային բազմաթիվ պայմանագրերի և մարդու իրավունքները պաշտպանող միջազգային դատարանների ստեղծմամբ: Հետևաբար, պետության ինքնիշխանությունը պետք էր դիտարկել ոչ միայն որպես արտաքին միջամտությունից զերծ մնալու իրավունք, այլև պատասխանատվություն՝ արդյունավետորեն կատարելու կառավարության վրա դրված պարտականությունները: Այս տեսանկյունից՝ ինքնիշխանությունը այլևս չպետք է ընկալվեր միայն որպես իրավունք, այլ որպես պարտավորություն ազգային համայնքի առջև՝ ապահովելու քաղաքացիների կենսական շահերը, ինչը համարվում է ինքնիշխանության անհրաժեշտ պայման (Borgia 224-225):

«Պաշտպանելու պարտականությունը» ենթադրում է, որ պետական ինքնիշխանությունը ոչ միայն իրավունք է (պետության ներսում գերակայություն և միջազգային հարաբերություններում անկախություն), այլև պարտականություն: Այս պարտականությունը ենթադրում է, որ պետությունը պետք է «պաշտպանի իր բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից», ինչը «ենթադրում է նման հանցագործությունների, այդ թվում՝ դրանց հրահրումը կանխելու անհրաժեշտություն՝ ձեռնարկելով համապատասխան և անհրաժեշտ միջոցներ» (Тихонов 204):

Միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի կանոնադրությունը և այլ միջազգային իրավական փաստաթղթեր բարձրացված խնդրի նկատմամբ ամրագրում են սկզբունքորեն այլ մոտեցում: ՄԱԿ-ի կանոնադրությունը հռչակում է միջազգային համագործակցության սկզբունքները մարդու իրավունքների և ազատությունների հարգման և զարգացման ոլորտում (1-ին հոդվածի 3-րդ կետ), միջազգային վեճերի խաղաղ կարգավորման (2-րդ հոդվածի 3-րդ կետ), միջազգային հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից զերծ մնալու (2-րդ հոդվածի 4-րդ կետ), պետության ներքին իրավասության մեջ մտնող հարցեր (ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 7-րդ կետ): Այս կանոնից կա միայն մեկ բացառություն, որը վերաբերում է իրավունքների և ազատությունների խախտման այն դեպքերին, որոնք ստեղծում են մի իրավիճակ, «որը սպառնում է խաղաղությանը կամ խոչընդոտում է Կանոնադրության դրույթների իրականացումը: Միայն այս դեպքերն են «դադարում լինել յուրաքանչյուր պետության բացառիկ գործը»: Մնացած բոլոր դեպքերում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության հարցը բացառապես յուրաքանչյուր պետության ներքին իրավասության մեջ է, ինչի մասին վկայում է ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետում պարունակվող սկզբունքի ձևակերպումը՝ իր սկզբնական և ներկայիս տարբերակով (Тихонов 204-205):

Միջազգային իրավունքում հստակ ձևակերպվում է պետությունների անշեղ պարտականությունը՝ պաշտպանելու մարդկությանը ոճրագործություններից: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, մատնանշում են մարդու հիմնական իրավունքները՝ որպես այդ պաշտպանության առարկա:

Արդեն 1948 թվականին ընդունվել էր Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիան, որը սահմանում է պետությունների պարտավորությունը՝ կանխելու ցեղասպանության հետ կապված հանցագործությունները (Абделькарим 997):

Վերոնշյալը միջազգային իրավական փաստաթղթերը ցույց են տալիս, որ «պաշտպանելու պարտականության» հայեցակարգը միջազգային իրավունքում ունի շատ խորն արմատներ:

Ինչպես արդեն նշել էինք, այս դոկտրինը Միջամտության և պետության ինքնիշխանության հարցերի միջազգային հանձնաժողովի կողմից ներդրվել էր 2001 թվականին՝ ի պատասխան Ռուանդայի ցեղասպանության և նախկին Հարավսլավիայում տեղի ունեցած վայրագությունների հարցում միջազգային հանրության անգործության:

Միջամտության և պետության ինքնիշխանության հարցերի միջազգային հանձնաժողովի զեկույցի համաձայն՝ «ինքնիշխան պետությունները պատասխանատվություն ունեն պաշտպանելու իրենց քաղաքացիներին՝ կանխարգելել աղետներից՝ զանգվածային սպանություններից և բռնություններից, սովից, բայց երբ նրանք չեն ցանկանում կամ չեն կարողանում դա անել, այդ պատասխանատվությունը պետք է կրի պետությունների ավելի լայն հանրությունը»: Այս սկզբունքը արտացոլում է մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը՝ պատասխանատվությունը փոխանցելով պետությունից (որտեղ ապրում է մարդը) այլ պետություններին, հատկապես՝ դրանց մարդու իրավունքների պաշտպանության համար: Մարդու իրավունքների պաշտպանությունը ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներից մեկն է, ինչպես նշված է ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետում (The Responsibility to Protect under International Law with reference to the Afghan Crisis):

Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետի՝ «ՄԱԿ-ի նպատակներից են՝ [...] (3) խրախուսել և աջակցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգմանը ու զարգացմանը՝ առանց ռասայական, սեռային, լեզվական կամ կրոնական խտրականության»: Այս սկզբունքը հաստատում է այն, որ մարդու իրավունքների պաշտպանությունը չի կարող լինել միայն պետության ներքին հարց, այլ այն պետք է ունենա միջազգային մակարդակով համընդհանուր պատասխանատվություն: Եվ, եթե պետությունը չի կարող կամ չի ցանկանում պաշտպանել իր բնակչության իրավունքները, միջազգային հանրությունը պետք է միջամտի և ապահովի նրանց իրավունքները:

«Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքն ավելի մանրամասն կարգավորվեց ՄԱԿ-ի Համաշխարհային գագաթնաժողովի կողմից՝ պետությունների և կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ 2005 թվականին ընդունված փաստաթղթով: Համաշխարհային գագաթնաժողովի արդյունքների փաստաթուղթը հատուկ ամրագրել է այս սկզբունքը հոդված 138 և 139-ում (General Assembly Resolution, A/ RES/ 60/1. 2005 World Summit Outcome 30): Այս սկզբունքը վերամշակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում և կրկին հաստատվել է Անվտանգության խորհրդի կողմից, սակայն այն դեռ չի դարձել միջազգային իրավունքի մաս, քանի որ չի ներառվել որևէ միջազգային պայմանագրում և չի ընդունվել որպես միջազգային սովորույթ:

Ըստ այդ հոդվածների. «138. Յուրաքանչյուր պետություն պատասխանատվություն ունի իր բնակչության առջև՝ պաշտպանելու նրանց ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից: Այս պատասխանատվությունը ենթադրում է նման հանցագործությունների կանխարգելում, այդ թվում՝ դրանց հրահրման կանխարգելում համապատասխան և անհրաժեշտ միջոցներով: Մենք ընդունում ենք այս պատասխանատվությունը և գործում ենք ըստ դրա: Միջազգային հանրությունը, ըստ անհրաժեշտության, պետք է խրախուսի և օգնի պետություններին ստանձնել այս պատասխանատվությունը և աջակցել ՄԱԿ-ին վաղ նախազգուշացման համակարգի ստեղծման գործում: 139. Միջազգային հանրությունը, ՄԱԿ-ի միջոցով, նույնպես պատասխանատվություն ունի օգտագործելու համապատասխան

դիվանագիտական, հումանիտար և այլ խաղաղ միջոցներ՝ ՄԱԿ-ի Կանոնադրության VI և VIII գլուխներին համապատասխան՝ բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից պաշտպանելու նպատակով: Այս համատեքստում մենք պատրաստ ենք ձեռնարկելու համատեղ գործողություններ՝ ժամանակին և վճռականորեն, Անվտանգության խորհրդի միջոցով, Կանոնադրության, այդ թվում՝ VII գլխին համապատասխան՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հիման վրա և համապատասխան տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, եթե խաղաղ միջոցները բավարար չլինեն, և եթե ազգային իշխանությունները ակնհայտորեն ձախողվում են իրենց բնակչությանը պաշտպանելու հարցում: Մենք ընդգծում ենք Գլխավոր ասամբլեայի կողմից ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից բնակչությանը պաշտպանելու պատասխանատվության շարունակական քննարկման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով Կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքները: Մենք նաև պատրաստ ենք, ըստ անհրաժեշտության և հնարավորության, աջակցելու պետություններին իրենց կարողությունները զարգացնելու գործում՝ բնակչությանը նման հանցագործություններից պաշտպանելու համար և օգնելու այն պետություններին, որոնք ճնշման տակ են՝ մինչև ճգնաժամերի և հակամարտությունների բռնկումը»:

Ինչպես երևում է այս երկու հոդվածներից, R2P-ն շատ ավելի լայն հասկացություն է, քան պարզապես այն իրավիճակները, երբ միջազգային հանրությունը որոշում է ուժ կիրառել՝ զանգվածային ոճրագործությունները դադարեցնելու համար: Իրականում՝ ուժի կիրառումը հստակ համարվում է վերջնական միջոց, եթե ոչ ռազմական միջոցները բավարար չեն, և երբ պետությունը ակնհայտորեն ձախողվում է իր բնակչությանը պաշտպանելու գործում:

Բնակչությանը պաշտպանելու հիմնական պատասխանատվությունը մնում է պետությունների վրա, իսկ այլ պետություններ պարտավորություն ունեն աջակցելու այդ ջանքերին: 139-րդ հոդվածը ընդգծում է, որ պետությունները նախ պետք է դիտարկեն խաղաղ միջոցները՝ նախքան ուժի դիմելը:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի՝ 2005 թվականի Համաշխարհային գագաթնաժողովի եզրափակիչ փաստաթուղթը հստակ սահմանափակում է «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքի կիրառումը՝ վերաբերելով միայն չորս տեսակի զանգվածային ոճրագործություններին՝

- ցեղասպանություն
- էթնիկ զտում
- պատերազմական հանցագործություններ
- մարդկության դեմ ուղղված հանցագործություններ:

R2P-ն չի կիրառվում մարդու իրավունքների այլ խախտումների կամ մարդկային անվտանգության նկատմամբ լուրջ սպառնալիքների դեպքում, օրինակ՝ կլիմայի փոփոխություն, համաճարակներ կամ վնասակար և կործանարար պետական քաղաքականություններ, ինչպիսիք են՝ քաղաքացիական ազատությունների կասեցումը, խորը աղքատությունը կամ զանգվածային կոռուպցիան: Այս հրատապ խնդիրները կարգավորելու համար ավելի համապատասխան են այլ՝ մարդու իրավունքների պաշտպանության միջոցներ, իրավական շրջանակներ և հաստատություններ (The responsibility to protect: A background briefing):

Այս տարբեր դերակատարների և պատասխանատվությունների մակարդակները ավելի ուշ ձևակերպվեցին ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի՝ 2009 թվականի զեկույցում՝ որպես «Պաշտպանելու պարտականության» (Responsibility to Protect, R2P) «երեք սյուներ»՝

- Առաջին սյուն – Պետության պաշտպանական պարտավորությունները
- Երկրորդ սյուն – Միջազգային աջակցություն և կարողությունների զարգացում
- Երրորդ սյուն – Ժամանակին և վճռական արձագանք (այդ թվում՝ ուժի կիրառման հնարավորություն):

Սակայն, ինչպես կարելի էր սպասել, հիմնական վեճերն առաջացան և շարունակում են ծագել ուժի հնարավոր օգտագործման շուրջ, քանի որ դա կարող է ընկալվել որպես պետության ինքնիշխանության համար վտանգ, և, միաժամանակ, կարող է պահանջել այնպիսի պաշտպանիչ միջոցներ, որոնց կապակցությամբ անդամ պետությունները պատրաստ չեն հանձնառություն ստանձնելու:

2011թ. ՆԱՏՕ-ի միջամտությունը Լիբիայում սկզբում ողջունվեց որպես R2P-ի օրինակելի կիրառում, սակայն ավելի ուշ քննադատվեց որպես Արևմուտքի կողմից R2P-ի չարաշահում՝ ոչ ցանկալի ռեժիմը հեռացնելու նպատակով: Բայց երբ որևէ ճգնաժամ ճանաչվում է որպես համապատասխան R2P-ին, տեսականորեն ճանապարհ է բացվում նաև ուժի կիրառման պահանջների համար՝ կախված այն բանից, թե որքան ծանր են ոճրագործության վտանգները, և ինչպես է արձագանքում տվյալ պետության կառավարությունը:

Դրա համար էլ շատերի համար, նույնիսկ երբ խոսքը R2P-ի առաջին կամ երկրորդ սյան մասին է, անհնար է տարանջատել ավելի հակասական՝ երրորդ սյան պաշտպանությունից:

Այս պատճառով R2P-ի առաջխաղացումը գրեթե անխուսափելիորեն ավելի վիճահարույց է, քան պարզապես մարդու իրավունքների առաջնահերթություն սահմանելը (Stensrud, Mennecke 436–437):

Երեք սյուների ամրագրելուց հետո՝ 2009թ. հուլիսին, տեղի ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին բանավեճը R2P-ի վերաբերյալ: Այդ քննարկման ընթացքում ՄԱԿ-ի անդամ պետությունները ճնշող մեծամասնությամբ վերահաստատեցին իրենց հանձնառությունը՝ ընդունված դեռևս 2005-ին: Գլխավոր ասամբլեան նաև միաձայն ընդունեց A/RES/63/308 բանաձևը՝ նշելով Գլխավոր քարտուղարի զեկույցը:

R2P սկզբունքը բազմիցս ամրագրվել է ՄԱԿ-ի բանաձևերում՝ ինչպես կանխարգելիչ, այնպես էլ՝ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում հարկադրական միջոցներ ձեռնարկելու համատեքստում: Այն ընդգրկվել է Անվտանգության խորհրդի ավելի քան 95 բանաձևերում, որոնք առնչվել են Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում, Կոտ դ'Իվուարում, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում, Լիբերիայում, Լիբիայում, Մալիում, Սոմալիում, Հարավային Սուդանում, Սիրիայում և Եմենում տեղի ունեցած ճգնաժամերին: Բացի դրանից, այն ներառվել է թեմատիկ բանաձևերում՝ նվիրված ցեղասպանության կանխարգելմանը, զինված հակամարտությունների կանխարգելմանը և փոքր զենքերի ու թեթև սպառազինության շրջանառության սահմանափակմանը:

«Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքը հիշատակվել է նաև Մարդու իրավունքների խորհրդի ավելի քան 80 բանաձևերում և Գլխավոր ասամբլեայի ավելի քան 40 բանաձևերում: 2020թ. հուլիսին Մարդու իրավունքների խորհուրդը իր 44-րդ նստաշրջանում ընդունեց 44/14 բանաձևը, որը ճանաչեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգի կարևոր ներդրումը՝ այնտեղ, որտեղ առկա է զանգվածային հանցագործությունների (atrocity crimes) վտանգ:

2021թ. մայիսին «Պաշտպանելու պարտականության» (Responsibility to Protect, R2P) վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի չորրորդ պաշտոնական քննարկման ավարտին ընդունվեց A/75/277 բանաձևը՝ «Պաշտպանելու պատասխանատվությունը և ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների, էթնիկ զտման և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կանխարգելումը»: Պետությունների ճնշող մեծամասնությունը կողմ քվեարկեց այս պատմական բանաձևին, որի արդյունքում Գլխավոր ասամբլեան որոշեց՝

- R2P-ը ներառել իր տարեկան օրակարգում
- պաշտոնապես խնդրել Գլխավոր քարտուղարին ամեն տարի զեկույց ներկայացնել այս թեմայով:

Բացի ՄԱԿ-ի մակարդակում տարվող աշխատանքներից՝ առանձին պետություններ և միջազգային ցանցեր, օրինակ՝ Պաշտպանելու պատասխանատվության կապերի գլոբալ ցանցը (Global Network of R2P Focal Points), ձեռնարկել են ազգային նախաձեռնություններ, որպեսզի կանխեն զանգվածային ոճրագործությունները՝ հետևելով I և II սյուների պարտավորություններին (What is R2P?):

Իր ընդունման պահից՝ «Պաշտպանելու պարտականություն» (R2P) սկզբունքը տարբեր հակամարտություններում կիրառվել է չափազանց ընտրովի կերպով: Ամենահայտնի դեպքը եղել է Լիբիայում 2011 թվականին, երբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունեց 1973 բանաձևը, որով թույլատրվեց ուժի կիրառումը՝ քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու նպատակով: Սակայն, այս միջամտության հետևանքներն առաջացրեցին սուր քննադատություն և նվազեցրին վստահությունը R2P-ի նկատմամբ: Մինչդեռ, միջազգային հանրությանը հայտնի էին և հայտնի են բազում հակամարտություններ, որոնցում կային մարդու իրավունքների լրջագույն խախտումներ, սակայն այս սկզբունքը չէր կիրառվել (օրինակ՝ Լեռնային Ղարաբաղ, Մյանմա (Ռոհինջա), Եմեն, Եթովպիա (Տիգրայ), Գազա):

Չնայած R2P-ն ամրագրված է ՄԱԿ-ի պաշտոնական փաստաթղթում, բայց դրա իրավական կարգավիճակը շարունակում է մնալ լուրջ քննարկման առարկա: Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ այն «փափուկ իրավունքի» նորմ է, որը իր բնույթով քաղաքական է և չունի պարտադիր իրավաբանական ուժ: Որոշ հետազոտողներ էլ նշում են, որ ժամանակի ընթացքում R2P-ն կարող է ձեռք բերել «emerging նորմի» բնույթ, հատկապես, եթե դրա կիրառումը դառնա ավելի հետևողական:

«Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզունքը Արցախի իրադարձությունների համատեքստում

2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած պատերազմի ընթացքում, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-ի մեկօրյա պատերազմում, այնպես էլ դրանից հետո՝ մինչ օրս, Ադրբեջանի ապօրինությունները հանգեցրել են մարդու իրավունքների մեծածավալ խախտումների: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների առավել մեծաքանակ խախտումներ ի հայտ են եկել Բերձորի (Լաչինի)՝ կենսական նշանակություն ունեցող միջանցքի արգելափակման հետևանքով, ինպես նաև Ադրբեջանի կողմից արցախահայության բռնի տեղահանման հետևանքով: Ադրբեջանի կողմից վերոնշյալ իրավունքների խախտումները պատերազմական հանցագործություններ են՝ ագրեսիա, որի արգելքն ամրագրված է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածով: Ըստ որի՝ Դատարանի իրավազորությունը սահմանափակվում է միջազգային ողջ հանրությանը մտահոգող առավել ծանր հանցագործություններով: Սույն Կանոնադրության համաձայն՝ Դատարանին ընդդատյա են հետևյալ հանցագործությունները. ա) ցեղասպանության հանցագործություն. բ) մարդկության դեմ ուղղված հանցագործություններ. գ) պատերազմական հանցագործություններ. դ) ագրեսիայի հանցագործություն:

2022 թվականի դեկտեմբերի 12-ին, ադրբեջանական «էկոակտիվիստների» կողմից Բերձորի միջանցքի շրջափակման հետևանքով արցախահայության ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը կոպտորեն ոտնահարվում է: Դրանից հետո ամբողջությամբ կտրված էր կապը ՀՀ-ի հետ: Արտաքին աշխարհի հետ կապի ամբողջական կորուստը նույնիսկ հնարավորություն չէր տալիս

արցախահայերին դիմելու կամ փորձելու դիմել որևէ միջազգային իրավական պաշտպանության կառուցակարգի, իսկ ինչպես նշել էինք, 2020 թվականից ի վեր Արցախում ՀՀ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու մասին խոսք լինել չէր կարող:

9 ամսից ավելի ապրելով ադրբեջանական շրջափակման ու պատերազմի սպառնալիքի պայմաններում, վերջում ենթարկվելով ադրբեջանական զինված հարձակման, ընտանիքի անդամներ ու հարազատներ կորցնելով, հարազատների շիրիմներ թողնելով՝ մարդիկ հարկադրված են լքել իրենց հայրենիքը, քանի որ նրանք էթնիկ ինքնությամբ հայ են1: Չնայած ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումներին, որոնք պարտադրում էին Ադրբեջանին ապահովել ազատ տեղաշարժ, շրջափակումը շարունակվեց ավելի քան ինը ամիս:

2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը միակողմանի ռազմական գործողություն սկսեց, որը տևեց մեկ օր, իսկ հաջորդ շաբաթվա ընթացքում գրեթե ողջ հայկական բնակչությունը (ավելի քան 100,000 մարդ) լքեց Արցախը՝ վախենալով հետապնդումներից և բռնություններից: Human Rights Watch-ը, Amnesty International-ը և մի շարք այլ իրավապաշտպան կազմակերպություններ նշել են էթնիկ զտման և վերադարձի ապահով երաշխիքների բացակայության նշաններ:

Այս կապակցությամբ, 2023թ. հոկտեմբերի 11-ին Ժնևում ընթացքող Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի 54-րդ նստաշրաջանի շրջանակներում 37 երկրներ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որտեղ խորը մտահոգություն են հայտնել Լեռնային Ղարաբաղում (օկուպացված Արցախի Հանրապետություն) մարդասիրական և մարդու իրավունքների ծանրագույն ճգնաժամի կապակցությամբ. «Մենք խորապես մտահոգված ենք Լեռնային Ղարաբաղում մարդասիրական և մարդու իրավունքների շուրջ ստեղծված ծանրագույն ճգնաժամով, ինչպես նաև վերջին շաբաթներում Լեռնային Ղարաբաղից (օկուպացված Արցախի Հանրապետություն) բնակչության տեղահանությամբ: Հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանումն իրենց տներից տեղի է ունեցել Ադրբեջանի կողմից ս.թ. սեպտեմբերի 19-ին իրականացրած ռազմական գործողության, ինչպես նաև ինն ամիս շարունակ Լաչինի (Բերձոր՝ խմբ.) միջանցքի արգելափակման հետևանքով, ինչը հանգեցրել է հումանիտար ծանրագույն իրավիճակի»,-մասնավորապես նշված է հայտարարության տեքստում (ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում համատեղ հայտարարություն է ներկայացվել Լեռնային Ղարաբաղի իրավիճակի վերաբերյալ):

Վերոնշյալ իրադարձությունները առաջ են հանում են մի շարք հիմնավոր հարցեր՝ Արցախի պարագայում R2P սկզբունքի կիրառելիության վերաբերյալ՝

- **Էթնիկ զտման և ցեղասպանության սպառնալիքի առկայությունը.**
- բնակչության զանգվածային և շտապ արտագաղթը, առանց անվտանգ վերադարձի հնարավորության, կարող է դիտվել որպես բռնի տեղահանման ակնհայտ չափորոշիչ:
- **Բերձորի միջանցքի շրջափակումը**. կենսական ճանապարհի՝ Բերձորի միջանցքի փակումը հանգեցրեց սննդի և դեղորայքի պակասի, ինչը կարող է դիտարկվել որպես քաղաքացիական բնակչությանը դիտավորյալ տառապանք պատճառելու գործողություն:
- Միջազգային դերակատարների չմիջամտելը. չնայած առկա իրավական և բարոյական հիմքերին՝ միջազգային հանրության որևէ սուբյեկտ չակտիվացրեց R2P-ի մեխանիզմները:
- Արցախի բնակչության ինքնապաշտպանության անհնարինությունը. Արցախահայերը ունեին ինքնապաշտպանության սահմանափակ հնարավորություններ՝ հատկապես Բերձորի միջանցքի արգելափակման հետևանքով:

[1] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս https://168.am/2023/09/26/1935970.html, Available: 04.04.2024.

Այդ միջանցքը միակ ճանապարհն էր, որը կապում էր Արցախը Հայաստանի Հանրապետության հետ:

• Միջազգային դերակատարների միջամտության ոչ արդյունավետությունը. Միջազգային և տարածաշրջանային մեխանիզմները, ինչպես օրինակ՝ ՀԱՊԿ-ի խաղաղապահները, ռուսական ուժերը և դիվանագիտական ուղիները, չկարողացան կանխել մարդասիրական ճգնաժամը, քանի որ «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքը նախատեսում է միջազգային միջամտություն ցեղասպանության, ռազմական հանցագործությունների, էթնիկ զտումների և մարդկության դեմ հանցագործությունների պարագայում:

Ադրբեջանի իշխանությունների գործողությունների և հռետորաբանության վերլուծությունը՝ զուգորդված Լեռնային Ղարաբաղի էթնիկ հայերի կենսափորձի հետ, ողջամիտ հիմքեր է տալիս այն եզրակացության համար, որ կատարված պատերազմական հացագործությունները և հայերի բռնի տեղահանումը կանխամտածված են եղել: Այս քաղաքականությունը իրագործվել է կանոնավոր գործողությունների շնորհիվ, որոնք մարդու իրավունքների՝ միջազգային մարդասիրական իրավունքի և միջազգային քրեական իրավունքի կոպիտ խախտումներ են: Ըստ այդմ, Ադրբեջանի փաստաթղթավորված գործողությունները համապատասխանում են նախկին Հարավսլավիայի հակամարտության համատեքստում ընկալվող էթնիկ զտումների չափանիշներին, որոնք իրականացվում են արտադատական մահապատիժների, խոշտանգումների, կամայական ձերբակալությունների և կալանավորման, սննդի և կյանքը փրկող դեղերի հասանելիության սահմանափակումների միջոցով, ինչպես նաև՝ քաղաքացիական բնակչության բռնի տեղահանում, կանխամտածված ռազմական հարձակումներ կամ հարձակման սպառնալիքներ խաղաղ բնակչության և քաղաքացիական տարածքների վրա և գույքի անխնա ոչնչացում (IDPF 2024):

Արցախի պարագայում, ըստ մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների տվյալների, առկա էին հետևյալ դեպքերը, որոնք կարող են համապատասխանել վերոնշյալ հանցագործությունների կատեգորիաներին:

Այսպիսով՝ իրավական տեսանկյունից Արցախում առկա էին բավարար նախադրյալներ մեկնաբանվող սկզբունքի կիրառման համար: Սակայն դրա իրականացումը մեծապես կախված էր միջազգային հանրության համաձայնությունից: Մասնավորապես, Ադրբեջանն Արցախը դիտարկում էր որպես իր տարածք, ինչը միջազգային միջամտությունը դարձնում էր իրավականորեն բարդ՝ առանց Բաքվի համաձայնության: Կամ գերտերությունների աշխարհաքաղաքական շահերի առկայությունը, օրինակ՝ Ռուսաստանի և Թուրքիայի ազդեցությունը, ինչպես նաև Արևմուտքի ռազմավարական շահերը տարածաշրջանում, ձևավորում էին հակասական և հաճախ կաթվածահար արձագանք: Եվ ամենակարևորը՝ միջազգային հանրության մոտ քաղաքական կամքի բացակայություն կար. միջազգային կառույցները սահմանափակվեցին միայն մարդասիրական կոչերով և բանակցային առաջարկներով՝ առանց գործնական քայլերի՝ քաղաքացիական բնակչության պաշտպանության ուղղությամբ:

Վերոնշյալից ուղղակիորեն բխում է, որ մեկնաբանվող սկզբունքի չկիրառումը Արցախում կապված է մի քանի գործոնների հետ՝

• «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքի ընտրողական կիրառում. Արցախի դեպքը ցույց է տալիս, որ իրավական հիմքերի առկայությունն ինքնին չի ապահովում սկզբունքի գործնական իրագործումը:

• «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) սկզբունքի կիրառման բարեփոխումների անհրաժեշտություն միջազգային իրավունքում: Անհրաժեշտ է մշակվեն մեխանիզմներ, որոնք կկարողանան շրջանցել քաղաքական արգելապատնեշները և միջազգային հանրության կողմից արդյունավետ արձագանք ապահովել:

• Միջազգային միջամտության սահմանափակ կառուցակարգեր: Ի տարբերություն Լիբիայի, որտեղ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հաստատեց ռազմական միջամտություն, Արցախի իրավիճակը չհանգեցրեց միահամուռ որոշման միջազգային մակարդակով: Այս հակամարտությունն ավելի շատ դարձավ դիվանագիտական ջանքերի առարկա, սակայն գործնականում միջամտությունը հիմնականում սահմանափակվեց հումանիտար օգնությամբ և վեճի խաղաղ կարգավորման կոչերով: Միջազգային հանրության կողմից բռնությունը դադարեցնելու ջանքերի վառ օրինակներից է 2020 թ. ստորագրված Եռակողմ հայտարարությունը, որը կնքվել էր Ռուսաստանի միջնորդությամբ:

Եզրակացություն

Իրավական առումով Արցախում առկա էին էթնիկ զտման, հումանիտար շրջափակման և քաղաքացիական բնակչության պաշտպանության անհնարինության դեպքեր, որոնք կարող էին հիմք հանդիսանալ սկզբունքի կիրառման համար: Սակայն դրա գործնական իրականացումը բախվեց միջազգային իրավունքի ինքնիշխանության սկզբունքին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում առկա տարաձայնություններին և միջազգային դերակատարների քաղաքական կամքի բացակայությանը:

Ինչպես արդեն նշել էինք, Human Rights Watch-ը և Amnesty International-ը մտահոգություն էին հայտնել մարդասիրական իրավիճակի վերաբերյալ, սակայն «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) պաշտոնական դոկտրինը չկիրառվեց: Բացի այդ, որոշ պետություններ և՛ դատապարտեցին Ադրբեջանի գործողությունները, սակայն սահմանափակվեցին միայն դիվանագիտական հայտարարություններ կատարելով:

Թեև Արցախում տեղի ունեցած իրավիճակները կարող էին համապատասխանել «Պաշտպանելու պարտականություն» (Responsibility to Protect, R2P) դոկտրինի չափանիշներին, սակայն միջազգային հանրությունն այս մեխանիզմը պաշտոնապես չկիրառեց: Սա կարող է վկայել կամ դոկտրինի կիրառման քաղաքական սահմանափակումների, կամ իրավական բավարար հիմքերի բացակայության, կամ էլ Ադրբեջանի և Թուրքիայի հետ սրացումից խուսափելու ցանկության մասին:

Այս դեպքը և այլ դեպքերը մատնանշում են «Պաշտպանելու պարտականության» (Responsibility to Protect, R2P) ընտրողական կիրառումը և քաղաքական կախվածությունը, ինչը հարցականի տակ է դնում դրա արդյունավետությունը՝ որպես համընդհանուր մեխանիզմ հումանիտար աղետները կանխելու գործում: Միաժամանակ, այն կարևոր փորձ է, որը կարող է ծառայել որպես հիմք այս սկզբունքի վերանայման և ապագայում ավելի ճկուն ու անկախ գործիքակազմերի մշակման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շվեյցարիայում ՀՀ դեսպանություն և Ժնևի ՄԱԿ գրասենյակում ՀՀ մշտական ներկայացուցչություն. *ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում համատեղ հայտարարություն է ներկայացվել Լեռնային Ղարաբաղի իրավիճակի վերաբերյալ.* 2023, https://clck.ru/3PQ55W: Վերջին այցը՝ 04.09.2025:

2. Абделькарим Яссин А. «Применение концепции «обязанность защищать» (R2P) для введения универсальной юрисдикции в отношении кибертерроризма». *Journal of Digital Technologies and Law*. 2023; 1(4), с. 994-1027. https://doi.org/10.21202/jdtl.2023.43.

3. Барановский Владимир. «Россия: эволюция взглядов на «ответственность по защите». *Пути к миру и безопасности*, 2018, № 1(54) Спецвыпуск. Гуманитарные вызовы, гуманитарное реагирование и защита гражданского

населения в вооруженных конфликтах, с. 115-128. https://doi.org/10.20542/2307-1494-2018-1-115-128.

4. Тихонов, И.М. «Актуальный вопрос международного права: концепция «Responsibility to protect»». *Приоритетные научные направления: от теории к практики*, (7), 2013, с. 203-210.

5. Borgia, Fiammetta. "The Responsibility to Protect Doctrine: between Criticisms and Inconsistencies". *Journal on the Use of Force and International Law*, *2*(2), 2015, https://doi.org/10.1080/20531702.2015.1090217, pp. 223-237.

6. Cottier, Thomas & Nadakavukaren Schefer, Krista. "Responsibility to Protect (R2P) and the Emerging Principle of Common Concern" Papers 407, *World Trade Institute*

7. General Assembly Resolution, A/ RES/ 60/1. 2005 World Summit Outcome, 2015, page 30 available at https://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf. Accessed: 13.09.2025.

8. Hilpold, Peter. *The Responsibility to Protect (R2P): A New Paradigm of International Law?* Researchgate, 2014, 10.1163/9789004230002.

9. "The Responsibility to Protect under International Law with Reference to the Afghan Crisis". International Law Blog, 2022, https://internationallaw.blog/2022/03/21/the-responsibility-to-protect-under-international-law-with-reference-to-the-afghan-crisis/. Accessed: 18.09.2025.

10. "The Responsibility to Protect: A background briefing". *Global Centre For The Responsibility To Protect,* 2021, https://www.globalr2p.org/publications/the-responsibility-to-protect-a-background-briefing/. Accessed: 18.09.2025.

11. Stensrud, Ellen, & Mennecke, Martin. "On the 20th anniversary of the responsibility to protect: Can small states save R2P from failure and oblivion?" *Nordic Journal of Human Rights*, 42(4), 2024, pp. 436–437 https://doi.org/10.1080/18918131.2024.2426404.

12. "What is R2P?". *Global Centre for the Responsibility to Protect,* https://www.globalr2p.org/what-is-r2p/. Accessed: 17.09.2025.

13. "Why Are There No Armenians In Nagorno-Karabakh? Fact-Finding Report Summary". *IDPF*, 2024, https://ldpf.am/en/why-are-there-no-armenians-in-nagorno-karabakh-fact-finding-report-summary. Accessed: 18.09.2025.

14. Jovanovic, Miodrag. "Responsibility to Protect and the International Rule of Law". *Chinese Journal of International Law*, 2015, 14. 757-776. 10.1093/chinesejil/jmv042.

15. Bellamy, Alex and Tim Dunne (eds). *The Oxford Handbook of the Responsibility to Protect*. Oxford Handbooks (2016; online edn, Oxford Academic, 3 Aug. 2016), https://doi.org/10.1093/oxfordhb/9780198753841.001.0001.

WORKS CITED

1. Shveycariayum HH despanut'yun ev Jhnevi MAK grasenyakum HH mshtakan nerkayacucchut'yun. Arcaxum hayeri zangvac'ayin teghahanumy' teghi e' unecel Adrbejani koghmic. 34 erkri haytararut'yuny' [The Mass deportation of Armenians in Artsakh was carried out by Azerbaijan: Statement by 34 Countries], https://iravaban.net/445934.html?fbclid=IwAR2-04O3q d8W1_7bss3DZcGi3Nb3X5vqAPntAFtXca7UsELvqKm8cqGh-Q, verjin aycy'` 04.09.2025.. (in Armenian)

2. Abdel'karim Jassin A. Primenenie konzepzii «objasannoct' sashishat'» (R2P) dlja wwedenija uniwercal'noj juricdikzii w otnoschenii kiberterrorisma [Applying the Responsibility to Protect (R2P) Concept to Establish Universal Jurisdiction over Cyber

Terrorism]. Journal of Digital Technologies and Law. 2023;1(4):994-1027. https://doi.org/10.21202/jdtl.2023.43. EDN: cmvqzx.. (in Russian)

3. Baranowckij Wladimir. Roccija: jewoljuzija wsgljadow na «otwetctwennoct' po sashite». Puti k miru i besopacnocti [Russia: Evolving Perspectives on the "Responsibility to Protect." Paths to Peace and Security], 2018, № 1(54) Cpezwypuck. Gumanitarnye wysowy, gumanitarnoe reagirowanie i sashita grazhdanckogo nacelenija w wooruzhennych konvliktach, cc. 115-128. https://doi.org/10.20542/2307-1494-2018-1-115-128.. (in Russian)

4. Tichonow, I.M.(2013). Aktual'nyj woproc mezhdunarodnogo prawa: konzepzija «Responsibility to protect» [A Current Issue in International Law: The Concept of "Responsibility to Protect"], Prioritetnye nautschnye naprawlenija: ot teorii k praktiki,(7), ctr. 203-210.. (in Russian)

THE LIMITS OF APPLYING THE RESPONSIBILITY TO PROTECT (R2P) PRINCIPLE IN THE CONTEXT OF ARTSAKH

AVETIK HARUTYUNYAN
Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Founder-Chairman;
«Scientific Artsakh» Journal, Editor-in-Chief;
Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate;
«AVE JUS» Law Firm, Founder,
French University in Armenia (UFAR), Lecturer,
Ph.D. in Law, Associate Professor,
Stepanakert, the Republic of Artsakh (NKR)

MARIAM GRIGORYAN
Armenian-Russian University, Lecturer,
Ph.D. in Law,
Yerevan, the Republic of Armenia

The Responsibility to Protect (R2P) is one of the most important principles in international law, aimed at preventing mass violations of human rights, such as genocide, war crimes, ethnic cleansing, and crimes against humanity. The principle was adopted by the international community as a mechanism for preventing humanitarian disasters and ensuring protection for victims of violence.

The aim of this article is to analyze the applicability of the R2P principle in the context of the Nagorno-Karabakh case from the perspective of international law and political practice.

The scholarly novelty of the research lies in the fact that the situation in Nagorno-Karabakh is examined not only in terms of the legal grounds for invoking R2P, but also within the broader context of political factors that contribute to the highly selective application of this doctrine.

This article is based on the analysis of normative acts (including UN documents), doctrinal sources, reports by international human rights organizations, and comparative case studies in which the R2P principle was either applied or not applied (e.g., Libya, Syria, Rwanda, etc.).

Accordingly, the central question of this study is whether the international community had the legal mechanisms to apply the Responsibility to Protect (R2P) principle in the case of Nagorno-Karabakh.

In conducting this research, the authors applied both general scientific methods (analysis, historical approach) and specific methods such as comparative legal analysis.

The main conclusion of the study is that the case of Artsakh highlights the selective application and political dependency of the “Responsibility to Protect” (R2P) principle, which calls into question its effectiveness as a universal mechanism for preventing humanitarian catastrophes. At the same time, it represents an important experience that may serve as a basis for revising this principle and developing more flexible and independent instruments in the future.

Keywords: *Responsibility to Protect, R2P, Artsakh, international law, principle, human rights violations, war.*

ПРЕДЕЛЫ ПРИМЕНЕНИЯ ПРИНЦИПА «ОТВЕСТВЕННОСТЬ ЗА ЗАЩИТУ» В АРЦАХЕ

АВЕТИК АРУТЮНЯН
учредитель и председатель Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
главный редактор Журнала «Научный Арцах»,
адвокат Палаты адвокатов Республики Армения;
учредитель юридической фирмы «AVE JUS»,
преподаватель Французского университета в Армении (UFAR),
кандидат юридических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах (НКР)

МАРИАМ ГРИГОРЯН
преподаватель Армяно-Российского университета,
кандидат юридических наук,
г. Ереван, Республика Армения

Принцип «Ответственность за защиту» (Responsibility to Protect, R2P) является одним из ключевых вопросов международного права, направленным на предотвращение массовых нарушений прав человека, таких как геноцид, военные преступления, этнические чистки и преступления против человечности. Принцип был принят международным сообществом как инструмент предотвращения гуманитарных катастроф и обеспечения защиты жертв насилия.

Цель настоящей статьи — проанализировать применимость принципа R2P в контексте ситуации в Нагорном Карабахе с точки зрения международного права и политической практики.

Научная новизна исследования заключается в том, что ситуация, сложившаяся в Нагорном Карабахе, рассматривается не только в контексте правовых оснований для применения R2P, но и сквозь призму политических факторов, делающих применение этой доктрины крайне избирательным.

Статья основана на анализе нормативных актов (включая документы ООН), доктринальных источников, докладов международных правозащитных организаций, а также сравнительном исследовании других случаев, в которых принцип R2P был либо применён, либо проигнорирован (Ливия, Сирия, Руанда и др.).

Основной вопрос, изучаемый в данной работе, заключается в том, имело ли международное сообщество правовые механизмы для применения принципа «Ответственность за защиту» в случае с Нагорным Карабахом.

В ходе исследования авторы использовал как общенаучные методы (анализ, принцип историзма), так и специальные методы, включая сравнительно-правовой анализ.

Основной вывод исследования заключается в том, что пример Арцаха указывает на избирательное применение и политическую зависимость принципа «Ответственности по защите» (Responsibility to Protect, R2P), что ставит под сомнение его эффективность как универсального механизма предотвращения гуманитарных катастроф. В то же время это является важным опытом, который может послужить основой для пересмотра данного принципа и разработки в будущем более гибких и независимых инструментов.

Ключевые слова: *Ответственность за защиту, Responsibility to Protect, Арцах, международное право, принцип, нарушение прав человека, война.*